

## Լրացուցիչ ընթերցանության նյութեր

### ՀԱՅ ԲՆԱԳԵՏՆԵՐ

**Աբրահամ Ալիխանով:** Հայազգի տաղանդավոր ֆիզիկոս Աբրահամ



(1904-1970)

Ալիխանովը ԽՍՀՄ-ում միջուկային ֆիզիկայի հիմնադիրներից մեկն էր: Նա ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս էր, Տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտի հիմնադիրը: Նրա ղեկավարությամբ Խորհրդային Միությունում առաջին անգամ ստեղծվել է ծանր ջրով աշխատող ատոմային ռեակտորը: Որպես ատոմային ծրագրի ղեկավարի թեկնածու, Ստալինը Կուրչատովի հետ միասին դիտարկում էր նաև Ալիխանովին:

Ալիխանովը Ստալինյան երեք մրցանակի դափնեկիր էր, Սոցիալիստական աշխատանքի հերոս, երեք անգամ պարգևատրվել էր Լենինի շքանշանով և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: 2004 թվականից Ռուսաստանի գի-

տությունների ակադեմիայի Տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտը կոչվում է նրա անվամբ:

### ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Իսահակի Ալիխանովը ծնվել է 1904 թ. Ելիզավետպոլում, Անդրկովկասյան երկաթուղու մեքենավարի ընտանիքում: Ընտանիքում չորս երեխա կար, երկու որդիները՝ Աբրահամն ու Արտեմը, և երկու դուստրերը: Բոլոր չորս երեխաներն էլ հետագայում ստացան բարձրագույն կրթություն: Երկու որդիներն էլ դարձան հայտնի ֆիզիկոսներ:

Թիֆլիսում դպրոցնավարտելուց հետո Աբրահամն ընդունվում է Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտը: Դեռևս ուսանող ժամանակ՝ 1927 թ., նրան աշխատանքի են ընդունում Լենինգրադի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում: Նրա առաջին աշխատանքները վերաբերում էին բյուրեղների կողմից ռենտգենյան ճառագայթման ցրման ուսումնասիրությանը:

1932 թ. նեյտրոնների և պոզիտրոնների հատնագործումից հետո ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Իոֆեն որոշում է, որ շտապ պետք է սկսել հետազոտությունները միջուկային ֆիզիկայի ոլորտում: Նա ինստիտուտում բացում է միջուկային ֆիզիկայի բաժին, որը գլխավորում է Կուրչատովը և հիմնադրում է պոզիտրոնների հետազոտությամբ զբաղվող լաբորատորիա, որը ղեկավարում է Ալիխանովը:

1934 թ. Ալիխանովը գործուղվում է արտասահման, որտեղ ծանոթանում է Լոնդոնի, Փարիզի և Բեռլինի լաբորատորիաներում կատարվող միջուկային ֆիզիկայի ուսումնասիրություններին:

1935 թ. Ալիխանովն իր եղբոր՝ Արտեմ Ալիխանյանի և Մ. Կոզադակի հետ համատեղ հայտնաբերում է գրգռված միջուկներից էլեկտրոն-պոզիտրոն զույգերի առաքման երևույթը, իսկ Արցիմովիչի և եղբոր հետ փորձով հիմնավորում է իմպուլսի պահպանման օրենքը էլեկտրոն-պոզիտրոն զույգի անհիլացման ժամանակ:

1940 թ. Ալիխանովը կազմակերպում է տիեզերական ճառագայթների հետազոտության առաջին արշավախումբը դեպի Էլբրուս և ապացուցում էլեկտրոնների ու ֆոտոնների միջոցով մասնիկային հեղեղների առաջացման երևույթը:

Հայրենական մեծ պատերազմի ամենածանր շրջանում՝ 1942 թ., նա իր եղբոր՝ Ալիխանյանի հետ Արագածին 3200 մ բարձրության վրա հիմնադրում է տիեզերական հետազոտությունների կայանը, որտեղ զբաղվում է տիեզերական ճառագայթների ուսումնասիրությամբ:



Ալիխանով և Ալիխանյան եղբայրները

1945 թ. Ալիխանովն ընդգրկվում է ատոմային նախագիծն իրականացնող գիտական խմբում: Նա նշանակվում է հատուկ լաբորատորիայի ղեկավար: Այդ լաբորատորիայի հենքի վրա 1956 թ. ստեղծվում է ԽՍՀՄ ԳԱ տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտը, որի տնօրենը մինչև 1968 թ. Ալիխանովն էր: Այստեղ նա միջուկային ռեակտորներին վերաբերող աշխատանքներին զուգահեռ հիմնարար հետազոտություններ է կատարում տարրական մասնիկների ֆիզիկայի բնագավառում: Նա տարրական մասնիկների արագարների ֆիզիկայի խորհրդային դպրոցի հիմնադիրներից է:

1968 թ. Ալիխանովը ստանում է ուղեղի կաթված: Դա թվով երրորդն էր. առաջին անգամ նա ստացել էր դեռևս առաջին ատոմային ռումբի ստեղծման ժամանակ, երկրորդ անգամ՝ 1964 թ. Խրուշչովի հետ ունեցած կոնֆլիկտից հետո, երբ ստիպված էր թողնել ինստիտուտի տնօրենի պաշտոնը: Նա մահանում է 1970 թ.:

## **ԱԼԻԽԱՆՈՎԻ ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ալիխանովը կենսախինդ, ուրախ անձնավորություն էր, սիրում էր կատակել, ճանապարհորդել, պատմության և հնագիտության մեծ սիրահար էր: Նա պատմում էր, որ երիտասարդ ժամանակ երազել է դառնալ հնէաբան, հետազոտել հնությունները:

Ալիխանովը արվեստի նուրբ ընկալող էր: Հայ մեծանուն գեղանկարիչ Մարտիրոս Սարյանը նրա մոտ ընկերն էր: Հայաստան այցելությունների ժամանակ նա հանդիպումներ էր ունենում մեծանուն արվեստագետների հետ: Ալիխանովը լավ ծանոթ էր Ավետիք Իսահակյանին, ընկերություն էր անում Արամ Խաչատրյանի հետ: Աշխարհահռչակ կոմպոզիտոր Դմիտրի Շոստակովիչը սիրում էր այցելել Ալիխանովին: Նա ասում էր. «Աբրահամ Իսահակովիչ, դուք հիանալի տուն ունեք, սակայն ինչպե՞ս եք կարողանում այդքան հեռու ապրել կոնսերվատորիայից»:

Ալիխանովը սիրում էր կրկնել Վիկտոր Համբարձումյանի խոսքերը, որ մարդը խոզից տարբերվում է մասնավորապես նրանով, որ երբեմն նայում է աստղերին:

## **ԵՐԳԵԼՈՒ ՓՈԽԱՐԵՆ ԿԱՐԵԼԻ Է ԽՈՍԵԼ**

Խորհրդային հայտնի ֆիզիկոսները, արդեն ծերացած ակադեմիկոսները հաճախ էին հանդիպում Ալիխանովի ամառանոցում: Մի անգամ, երբ Ալիխանովը դժգոհում էր, որ տնեցիները նրան մոտ չեն թողնում էլեկտրական

սարքավորումներին, ակադեմիկոս Կապիցան ասաց. «Ոչի՛նչ, մի՛ դժգոհեք, Ռեզերֆորդի կինը նրան չէր թողնում նույնիսկ դրան զանգը նորոգել»:

Ալիխանովին բարկացնում էր Լանդաուի վերաբերմունքը երաժշտության նկատմամբ: Երբ մասնակիցներից մեկը փորձում էր երգել, Լանդաուն ընդհատում էր նրան հետևյալ խոսքերով. «Ինչո՞ւ երգել, երբ կարելի է խոսել»:

## ԱԼԻԽԱՆՈՎԸ, ԹԵ՛ ԿՈՒՐՉԱՏՈՎԸ

Հայտնի է, որ Ստալինը որպես ատոմային ռումբի ստեղծման աշխատանքների ղեկավարի թեկնածուներ դիտարկում էր Կուրչատովին և Ալիխանովին: Եթե Կուրչատովը չկարողանար հաջողությամբ ավարտել աշխատանքները, ապա նրա տեղը պետք է զբաղեցներ Ալիխանովը:

Ինչո՞ւ առավելությունը տրվեց Կուրչատովին, այժմ դժվար է ասել: Գոյություն ունի մի քանի վարկած: Ասում են, որ Ստալինի հետ նախնական զրույցի ժամանակ Ալիխանովը իրեն շատ անկախ էր պահում: Գուցե դեր է խաղացել այն, որ Ալիխանովը կուսակցական չէր, կամ որ նա հայ էր:

Հետաքրքիր է, որ 1943 թ. ակադեմիկոս ընտրվեց Ալիխանովը, ով այդ ժամանակ արդեն համաշխարհային ճանաչում ուներ, իսկ Կուրչատովի համար կուսակցության կենտրոնական կոմիտեի պահանջով լրացուցիչ տեղ հատկացվեց: Չնայած դրան՝ Ալիխանովը և Կուրչատովը միշտ լավ ընկերներ մնացին:



Ալիխանովն աշխատելիս

## ՌԵՃԱՑԱՆ ԸՆԴԱՄԵՆԸ ԵՐԿՈՒ ԱՄԻՍ

Պոզիտրոնների աղբյուրներ որոնելիս Կյուրի ամուսինները հայտնաբերեցին նոր երևույթ՝ արհեստական ռադիոակտիվությունը, ինչի համար նրանք ստացան Նոբելյան մրցանակ:

Հետաքրքիր է նշել, որ նրանցից անկախ արհեստական ռադիոակտիվության երևույթը հայտնաբերել էին նաև Ա. Ի. Ալիխանովը, Ա. Ի. Ալիխանյանը և Բ. Խ. Ջելեպովը: Նոր տիպի ռադիոակտիվության մասին հաղորդումը նրանք տպագրեցին Կյուրիներից ընդամենը երկու ամիս ուշ:

**Արտեմ Ալիխանյան:** Միջին և մեծ սերնդի յուրաքանչյուր ոք, ներկայիս



(1908-1978)

յուրաքանչյուր դպրոցական լսել է հանրահայտ հայագգի ֆիզիկոս Արտեմ Ալիխանյանի մասին: Նրա անվան հետ է կապվում Երևանում գտնվող արագարարը, ֆիզիկայի ինստիտուտը: Նրան է նվիրված «Բարև, ես եմ» գեղարվեստական կինոնկարը:

Ալիխանյանի գիտական աշխատանքները վերաբերում են միջուկային ֆիզիկային, տիեզերական ճառագայթներին, տարրական մասնիկների ֆիզիկային, արագարարների տեսությանը:

Նա իր եղբոր՝ Ա. Ալիխանովի, և Մ. Կոզազակի հետ հայտնաբերել է գրգռված միջուկներից էլեկտրոն-պոզիտրոն զույգերի առաքման երևույթը, իսկ եղբոր և Լ. Արցիմովի-

չի հետ փորձով հիմնավորել է իմպուլսի պահպանման օրենքը էլեկտրոն-պոզիտրոն զույգերի անիհիլացման ժամանակ:

Ալիխանյանը Արագածի տիեզերական ճառագայթների հետազոտման կայանում հայտնաբերել է լիցքավորված մասնիկների հեղեղները, մեծ էներգիայով պրոտոնների հոսքերի գոյությունը տիեզերական ճառագայթներում: Փորձարարական հետազոտությունների հիման վրա նա առաջինն է նշել տարրական նոր մասնիկների գոյությունը տիեզերական ճառագայթներում:

Նա ստեղծել և կատարելագործել է մեծ էներգիայով մասնիկների հետազոտման սարքեր: Ալիխանյանի նախաձեռնությամբ ստեղծվել է Երևանի օդակաձև էլեկտրոնային արագարարը, Նոր Ամբերտի հետազոտական կայանը:

Ալիխանյանը ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր էր, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, Հայաստանի ԳԱ ակադեմիկոս:

## ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արտեմ Իսահակի Ալիխանյանը ծնվել է 1908 թ. Թիֆլիսում: 1918 թ. ընտանիքը տեղափոխվում է Ալեքսանդրապոլ, սակայն 1920 թ. թուրքերից փախչում է Թիֆլիս: Ուսման վարձը չվճարելու պատճառով Արտեմը դուրս է մնում դպրոցից: Նա զբաղվում է Թիֆլիսի փողոցներում թերթ վաճառելով, պանդուկներում թեյ մատուցելով:

Էքստենզ կարգով հանձնելով քննությունները՝ Ալիխանյանը ստանում է աստեսատ և ընդունվում Լենինգրադի համալսարանը:

Համալսարանի երրորդ կուրսից նա աշխատանքի է անցնում Լենինգրադի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում:

Նրա առաջին գիտական աշխատանքները վերաբերում էին բյուրեղաֆիզիկային, ռենտգենյան ճառագայթմանը և արագ էլեկտրոնների դիֆրակցիային: Սակայն շուտով նրա հետաքրքրությունները փոխվում են դեպի միջուկային ֆիզիկան:

29 տարեկանում Ալիխանյանը պաշտպանում է թեկնածուական թեզ, իսկ երկու տարի անց՝ դոկտորական թեզ և ստանում պրոֆեսորի կոչում:

Պատերազմի տարիներին Ալիխանյանը իր եղբոր՝ Աբրահամ Ալիխանովի հետ միասին Արագած լեռան վրա հիմնադրում է Տիեզերական ճառագայթների գիտահետազոտական կայանը: Այդ տարիներին Ալիխանյանը ձեռնամուխ է լինում տիեզերական ճառագայթման մասնիկների բնույթի և սպեկտրերի ուսումնասիրությանը: Նրա նախաձեռնությամբ և ղեկավարությամբ Երևանում կառուցվում է այդ ժամանակների համար աշխարհում ամենահզոր էլեկտրոնային օղակաձև արագարարը:

1946 թ. ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության կողմից Ալիխանյանը գործուղվում է Գերմանիա՝ Հայաստանի ֆիզիկայի ինստիտուտի համար ռազմավարային սարքավորումներ ընտրելու համար:

1948 թ. տիեզերական ճառագայթների ոլորտում կատարած հետազոտությունների համար Ալիխանյանը եղբոր հետ միասին արժանանում է Ստալինյան մրցանակի: 1943-1973 թվականներին նա ղեկավարում էր Երևանի ֆիզիկայի ինստիտուտը:

Ալիխանյանի աշխատանքները բարձր են գնահատվել, նա ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ էր, ԽՍՀՄ Պետական և Լենինյան մրցանակակիր, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր:

## ԸՆՏԱՆԻՔԸ

Արտեմ Ալիխանյանը ամուսնանում է 1956 թ. 48 տարեկան հասակում: Նա կնոջից մեծ էր 30 տարով: Շուտով ծնվում են նրա երկու զավակները՝ աղջիկը՝ Նինան և որդին՝ Արտեմը: Նա շատ էր սիրում իր զավակներին. «Ես ձեզանից երջանիկ եմ, - ասում էր նա իր երիտասարդ աշխատակիցներին, - ես իմ երեխաներին սիրում եմ միաժամանակ և՛ որպես հայր, և՛ որպես պապիկ»:

## ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ալիխանյանը ջանք չէր խնայում Հայաստանում զարգացնելու գիտությունը, մասնավորապես՝ ֆիզիկան: Օգտագործելով աշխարհով մեկ հայտնի իր

հեղինակությունը՝ նա կարողանում էր իրականացնել Հայաստանի զարգացմանն ուղղված մի շարք նախագծեր:

Ալիխանյանը մեծ սեր ուներ երաժշտության նկատմամբ, ջերմ հարաբերություններ ուներ Ռոստրոպովիչի, Շոստակովիչի հետ: Նրանց շատ ստեղծագործություններ գրվել են Արագածի վրա:

Նրա ուշադրության կենտրոնում էր նաև գեղանկարչությունը, հատկապես հայ ժամանակակից նկարիչների աշխատանքները:

Պատմում են, որ երբ Մոսկվայում բացվում է ավանգարդիստական կերպարվեստի ցուցահանդեսը, Խրուշչովը հրամայում է բուլդոզերներով գետնին հավասարեցնել այդ՝ իր կարծիքով չակերտավոր արվեստը: Ալիխանյանն այդ ժամանակ կարողանում է բավականաչափ նկարներ բերել Հայաստան, որոնք մինչ օրս պահվում են տարբեր թանգարաններում:

## ԵՐԵՎԱՆԻ ՕՂԱԿԱԶԵՎ ԱՐԱԳԱՐԱՐԸ

Ալիխանյանը մեծ ջանքեր է ներդնում Երևանի էլեկտրոնային օղակաձև արագարարը կառուցելիս: Լինելով Մոսկվայում՝ նա հաճախակի այցելում էր Ատոմային էներգիայի պետական կոմիտե. հենց այդ կառույցն էր ֆինանսավորում արագարարի շինարարությունը: Ալիխանյանին հաջողվել է հասնել նրան, որ ֆինանսավորումը կատարվի միութենական, այլ ոչ թե՛ Հայաստանի Հանրապետության բյուջեից:

«Արագարարի կառուցումը ունի նաև սոցիալական նշանակություն, - ասում էր նա, - միջոցների զգալի մասը ես պետք է հատկացնեմ նաև աշխատողների համար բնակարաններ, դպրոց, մանկապարտեզ, խանութ կառուցելու համար»:

Արագարարի կառուցման աշխատանքներին մասնակցում էր նաև տաղանդավոր ֆիզիկոս Յուրի Օռլովը: Նրան 1956 թ. հեռացրել էին կոմունիստական կուսակցության շարքերից ու Տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտից: Պատճառը նրա «հակասովետական» ելույթն էր կուսակցական ժողովում, որտեղ քննարկվում էր Ստալինի անձի պաշտամունքի մասին Խրուշչովի փակ ելույթը:

Պատասխանատվությունը վերցնելով իր վրա՝ Ալիխանյանը Օռլովին աշխատանքի է հրավիրում Երևանի ֆիզիկայի ինստիտուտ, որտեղ նա դառնում է արագարարի կառուցման ծրագրի գլխավոր տեսաբանը: Հետագայում Օռլովը նորից տեղափոխվում է Մոսկվա և իր իրավապաշտպան գործունեության համար ձերբակալվում և 12 տարի աքսորից ու ճամբարներից հետո վերակառուցման տարիներին արտաքսվում է ԱՄՆ:

## ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Ալիխանյանը կոմունիստական կուսակցության անդամ չէր, ինչն այդ ժամանակ հազվագյուտ բացառություն էր: Կյանքի վերջին տարիներին սրվել էին նրա հարաբերությունները Ատոմային էներգիայի պետական կոմիտեի ղեկավարության հետ: Նրա խռովարար բնավորությունը ընդունելի չէր ղեկավարության համար: Բացի այդ ինստիտուտում ձևավորվել էր լաբորատորիաների երիտասարդ ղեկավարների մի խումբ, որը դժգոհ էր Ալիխանյանի աշխատանքից: Նրանք բողոքներ էին հղում Ատոմային էներգիայի կոմիտե, կուսակցական մարմիններ:

Այդ ամենի արդյունքում Ալիխանյանն ազատվում է Երևանի ֆիզիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնից և տեղափոխվում է Մոսկվա: Այս առիթով նա կատակում էր. «Անցած դարում զանցանքի համար աքսորում էին Կովկաս, իսկ ինձ, ընդհակառակը, Կովկասից աքսորեցին Մոսկվա»:

Վերջին չորս տարիներին Ալիխանյանը հազվադեպ էր այցելում Երևան: Նրա ընտանեկան կյանքը ճեղքվածք էր տվել, սրվել էին հիվանդությունները: Սակայն գիտության նկատմամբ հետաքրքրությունը չէր լքում նրան: Նա շարունակում էր նոր գաղափարներ առաջարկել, մտածում էր 50 ԳեՎ էներգիայով հանդիպակաց փնջերով էլեկտրոնային արագարարի կառուցման մասին: Ըստ նրա՝ այդ արագարարը նպատակահարմար էր կառուցել ոչ թե Երևանում, այլ Ռուսաստանի հարավում:

1977 թ. աշնանը Ալիխանյանը լյարդի անբուժելի հիվանդությամբ հայտնվում է Մոսկվայի ակադեմիական հիվանդանոցում: Մոսկովյան իր լաբորատորիայի աշխատակիցներն ամեն կերպ աշխատում էին շեղել նրա ուշադրությունը հիվանդությունից, սակայն վճիռն արդեն կայացված էր, նա մահացավ մեկ տարի անց:

Ալիխանյանին թաղեցին Երևանում, չէ՞ որ ինքն էր ասում. «Ես չեմ դադարի սիրել Հայաստանը, քանի դեռ չեմ դարձել նրա հողի մասնիկը:

## ԵՂՐՈՐ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ահա թե ինչ է գրում Արտեմ Ալիխանյանը իր եղբոր՝ Իսահակ Ալիխանովի մասին. «Մենք պայմանավորվել էինք, որ եթե մեզանից մեկը մասնակցի գաղտնի աշխատանքներին, ապա մյուսը պետք է զբաղվի միայն բաց աշխատանքներով: Այդպես էլ եղավ: Իսահակը ստիպված էր գործ ունենալ միջուկային ռեակտորների հետ, իսկ ես՝ տիեզերական ճառագայթների: Մեր համատեղ աշխատանքներում ես միշտ ասում էի, թե ինչ պետք է անել, իսկ նա՝ ինչպես պետք է անել»:



## ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԵՐԱԾԵԽՈՒԹՅՈՒՆ

Երբ Ալիխանյանը առաջին անգամ մեկնում է ԱՄՆ, նրանց խումբը հանդիպում է Ատոմային էներգիայի կոմիտեի նախագահ Գլեն Սիբորգի հետ: Նրա հետ զրույցը ընթանում է շատ պաշտոնական և ոչ մի կերպ չի հաջողվում ընդհանուր լեզու գտնել: Դրությունը փրկում է Ալիխանյանը:

- Դուք, հավանաբար, գործ ունեցել եք ռադիոակտիվ ճառագայթման հետ:


- Այո՛, - պատասխանում է Սիբորգը, - իսկ Դուք ինչպե՞ս դա իմացաք:

- Շատ պարզ: Ձեր աջ ձեռքի ցուցամատի և բթամատի եղունգները, ինչպես իմը, դեղնավուն են:

Եվ Ալիխանյանը ցույց է տալիս իր ձեռքի եղունգները, որոնք իրոք դեղնել էին Ֆիզտեխում հաճախ ռադիումի պրեպարատի հետ շփվելիս:

Սիբորգը ժպտում է, և նրանք սկսում են զրուցել որպես լավ բարեկամներ:

## **Վիկտոր Համբարձումյան:** Վիկտոր Համբարձումյանի անունը լավ



(1908-1996)

հայտնի է համաշխարհային գիտական ամենալայն շրջաններում:

Համբարձումյանը Ստալինյան մրցանակի կրկնակի դափնեկիր էր, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, Հայաստանի ազգային հերոս, Ռուսաստանի Դաշնության պետական մրցանակի դափնեկիր, արժանացել էր Լենինի հինգշքանշանի, Հոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի, Պատվո նշան շքանշանների և բազմաթիվ երկրների պարգևների:

Նա աշխարհի ավելի քան 30 ազգային ակադեմիաներին միջազգային կազմակերպությունների պատվավոր անդամ էր, երկու ան-

գամ ընտրվել էր Գիտական միությունների համաշխարհային խորհրդի նախագահ:

## **ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վիկտոր Համազասպի Համբարձումյանը ծնվել է 1908 թ. Թիֆլիսում: Նրա հայրը բազմակողմանի զարգացած անձնավորություն էր, միջնակարգ կրթությունը ստացել էր Մոսկվայի Լազարյան ձեմարանում, իսկ բարձրագույնը՝ Պետերբուրգի իմպերատորական համալսարանում:

Արդեն երեք-չորս տարեկանում նկատելի է դառնում Վիկտորի հետաքրքրությունը թվերի նկատմամբ: Դպրոցական տարիներին առավել ցայտուն են դրսևորվում նրա հակումները մաթեմատիկայի և աստղագիտության նկատմամբ:

1924 թ. 16-ամյա Համբարձումյանը ընդունվում է Լենինգրադի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը և մեկ տարի անց տեղափոխվում Լենինգրադի պետական համալսարան: Նա ուսանողական տարիներին տպագրում է մոտ 10 գիտական հոդված:

Համալսարանն ավարտելուց հետո Համբարձումյանն ուսանում է Պուլկովոյի աստղադիտարանի ասպիրանտուրայում: 26 տարեկանում Համբարձումյանը հիմնադրում և ղեկավարում է Լենինգրադի համալսարանի աստղաֆիզիկայի ամբիոնը: 27 տարեկանում նրան շնորհվում է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճան՝ առանց ատենախոսության պաշտպանության, ինչը նրա գիտական մեծ հեղինակության և համաշխարհային համբավի

արդյունք էր: 31 տարեկանում Համբարձումյանը ընտրվում է ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, իսկ 45 տարեկանում՝ իսկական անդամ:

1943 թվականից Համբարձումյանն աշխատում է Հայաստանում: 1953 թ. նա ընտրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ և այդ պաշտոնում անընդհատ վերընտրվում մինչև 1993 թ.:

1946 թ. Համբարձումյանը հիմնադրում է Բյուրականի աստղադիտարանը և մինչև 1988 թ. անփոփոխ ղեկավարում է այն:

Համբարձումյանը մահացել է 1996 թ. Բյուրականում: Նա թաղված է Բյուրականի աստղադիտարանի տարածքում, ընտանեկան գերեզմանատանը: Նրա առանձնատունն այժմ գիտնականի տուն-թանգարանն է:

## ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Համբարձումյանը տեսական աստղաֆիզիկայի հիմնադիրներից մեկն է: Նրա աշխատությունները վերաբերում են աստղերի և միգամածությունների ֆիզիկային, աստղային համակարգերի դինամիկային, աստղերի և գալակտիկաների տիեզերածությանը: Նա հետազոտություններ է կատարել նաև մաթեմատիկական և միջուկային ֆիզիկայի բնագավառներում:

Համբարձումյանը զբաղվել է աստղերի գազային թաղանթների, գազային միգամածությունների հիմնախնդիրներով, իր կողմից առաջարկած ինվարիանտության սկզբունքի հիման վրա ստեղծել է պղտոր միջավայրում լույսի ցրման տեսությունը, որը ներկայումս կիրառվում է մաթեմատիկական ֆիզիկայի տարբեր ձյուղերում:

Գալակտիկայում աստղային համակարգերին վերաբերող դիտողական նյութի տեսական վերլուծության հիման վրա Համբարձումյանը հայտնաբերել է նոր տիպի աստղային համակարգեր՝ աստղասփյուռներ, ապացուցել, որ աստղառաջացման գործընթացները Գալակտիկայում շարունակվում են նաև ներկայումս:



Համբարձումյանը տեսական աստղաֆիզիկայի հիմնադիրներից մեկն է:

Համբարձումյանը առաջարկել է նախաստղային նյութի նոր հայեցակարգ: Ի տարբերություն դասական վարկածի, որի համաձայն՝ աստղերը առաջանում են ցրված նյութի խտացման հետևանքով, ըստ Համբարձումյանի՝ աստղերն առաջանում են աստղասփյուռներում նախաստղային նյութի տրոհման արդյունքում:

Համբարձումյանի հետազոտությունները նվիրված են նաև գալակտիկաների էվոլյուցիայի խնդիրներին:

Իվանենկոյի հետ համատեղ Համբարձումյանն առաջին անգամ առաջ է քաշել այն գաղափարը, որ ոչ զրոյական զանգվածով մասնիկները փոխազդեցության ժամանակ կարող են ծնվել կամ ոչնչանալ:

Համբարձումյանը Իվանենկոյի հետ միասին ցույց է տվել, որ միջուկի ներսում ազատ էլեկտրոնը չի կարող գոյություն ունենալ և դրա փոխարեն պետք է գոյություն ունենան չեզոք մասնիկներ: Ըստ էության՝ դա նեյտրոնի կանխատեսումն էր, որը երկու տարի անց հայտնագործեց Չեդվիկը:



Համբարձումյանը Վիլյամ Սարոյանի հետ զրուցելիս

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Իր գիտական գործունեության նախնական շրջանում Համբարձումյանը մի շարք հետաքրքիր արդյունքներ էր ստացել նաև մաթեմատիկայի բնագավառում, որոնք նրան ճանաչում էին բերել մասնագետների շրջանում: Այդ առումով բնորոշ է հետևյալ դեպքը, որը տեղի է ունեցել 1950 թ. Ստոկհոլմում:

Երբ Վ. Համբարձումյանին ծանոթացնում են շվեդ մի մաթեմատիկոսի հետ, վերջինս որպես աստղաֆիզիկայի պրոֆեսոր ներկայացած Համբարձումյանից հարցնում է, թե նա արդյոք մաթեմատիկոս Համբարձումյանի ազգականը չէ՞ և հիշատակում է նրա մի աշխատանք:

Խոսքը Վ. Համբարձումյանի դեռևս 1929 թ. հրապարակած հայտնի աշխատանքի մասին էր՝ նվիրված դիֆերենցիալ հավասարումների սեփական արժեքների տեսությանը: Մեծ է եղել շվեդ պրոֆեսորի զարմանքը, երբ իմացել է, որ այդ աշխատության հեղինակ մաթեմատիկոսը նույն ինքը՝ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանն է:

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Համբարձումյանն իր ամբողջ կյանքում ծավալում էր ակտիվ մանկավարժական գործունեություն: Նա ԽՍՀՄ-ում լույս տեսած առաջին «Տեսական աստղաֆիզիկա» դասընթացի հեղինակն էր, որը հետագայում թարգմանվեց շատ լեզուներով:

Համբարձումյանը դեռևս 1934 թ. Լենինգրադի համալսարանում հիմնադրել էր ԽՍՀՄ-ում առաջին աստղաֆիզիկայի ամբիոնը, իսկ 10 տարի անց նույնպիսի ամբիոն բացվեց Երևանի պետական համալսարանում: Համբարձումյանը գիտական խոշոր դպրոցներ էր ստեղծել Լենինգրադում և Բյուրականում:

Համբարձումյանը մեծ գործունեություն էր ծավալում գիտության մասսայականացման ոլորտում նա երկար տարիներ Հայաստանի «Գիտելիք» ընկերության նախագահն էր:

Համբարձումյանը փայլուն դասախոս էր, նրա դասախոսություններին ներկա էին գտնվում ուսանողներ և դասախոսներ համալսարանի բոլոր ֆակուլտետներից՝ և՛ մաթեմատիկոսներ, և՛ բանասերներ: Նա դասախոսությունները երբեք չէր կարդում թղթից, ամբիոնի մոտ չէր կանգնում նույնիսկ հինգ րոպե, դրա փոխարեն ոտքի տակ էր տալիս ամբողջ լսարանը: Նա զարմացնում էր իր մտքերի խորությամբ, հանրագիտայնությամբ, յուրօրինակությամբ:

## ԸՆՏԱՆԻՔԸ

Վիկտոր Համբարձումյանի հայրը՝ Համազասպ Համբարձումյանը իրավագետ էր, թարգմանիչ, գրականագետ: Նրա հայտնի թարգմանություններից է Հոմերոսի «Իլիականը»: Նրա քույրը մաթեմատիկոս էր, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ, դասավանդում էր Երևանի պետական համալսարանում:

23 տարեկանում Վիկտոր Համբարձումյանը ամուսնանում է Վերա Կլոխիչինայի հետ: Նրանց չորս զավակներից երկուսը՝ Ռաֆայելը և Ռուբենը, ֆիզիկոսներ են:

Ահա մի դրվագ կնոջ մասին Համբարձումյանի հուշերից. «Մեր ամուսնությունից չորս ամիս անց Վերա Ֆյոդորովնան այնպես էր տիրապետում հայերենին, որ մորս և հյուրերի հետ խոսում էր հայերեն: Տեղափոխվելով Երևան՝ նա աշխատանքի անցավ Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում որպես անգլերենի դասախոս: Բոլոր բացատրությունները նա ուսանողներին տալիս էր հայերենով:

Մի անգամ ես Հայաստանի կենտրոնի առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանին հրավիրեցի մեր տուն՝ ընթրիքի: Ուշ երեկո էր: Վերան նրան և ինձ հյուրասիրեց ոշտայով: Քարտուղարը զարմացած էր երկու բանից. առաջինը, որ իմ ռուս կինը կարողանում է հայկական այդպիսի ուտեստ պատրաստել և երկրորդը, որ ակադեմիկոսը բավարարվում է այդպիսի համեստ սննդով:

Մեղավորը ես էի, քանի որ միշտ կարծում էի, որ ոշտան հայկական խոհանոցի ամենահամեղ ուտելիքն է: Այդ առիթով մենք շատ ծիծաղեցինք, և նա հասկացավ, որ մեր տանը առաջին հերթին հարգում են ժողովրդական սովորությունները և պարզ հարաբերությունները»:

## ԵՐԲԵՄՆ ՊԵՏՔ Է ՆԱՅԵԼ ԵՐԿՆՔԻՆ

Ակադեմիկոս Գևորգ Բրուտյանը հիշում է. «Վիեննայում եղած ժամանակ մեզ նախօրոք զգուշացրել էին երթևեկության կանոնների մասին. փողոցը կարմիր լույսի տակ անցնելիս մեքենան կարող էր վրաերթ կատարել, և վարորդը, առանց պատժվելու, իրավունք ուներ հանգիստ շարունակել իր ընթացքը:

Վիկտոր Համբարձումյանը սովորություն ուներ զբոսանքի ժամանակ հաճախակի երկնքին նայել: Դրա համար ես միշտ ուշադիր էի և հիշեցնում էի նրան ընդունված կանոնների մասին:

Ըմբռնումով մոտենալով իմ ասածներին՝ նա նկատեց. «Մարդիկ միշտ չէ, որ պետք է ոտքերի տակ նայեն, երբեմն պետք է հայացքն ուղղել երկնքին»:

... Նույնիսկ երկնքին նայելիս Համբարձումյանը կարողանում էր տեսնել երկրի վրա տեղի ունեցող ամեն ինչ: Մի անգամ Վիեննայի փողոցներում զբոսնելիս, հայացքն ուղղելով շենքերից մեկին, նա ասաց. «Այն շենքում հայեր են ապրում»: Տեսնելով իմ զարմանքը՝ շարունակեց. «Եթե ուզում եք համոզվել, բախե՛ք նրանց բնակարանի դուռը: Թեև պետք չէ անհանգստացնել նրանց, ավելի լավ է՝ նայե՛ք նրանց պատշգամբում կախված գորգին»:

## ՆԱ ԼԱՎ ԳԻՏԵՐ ԹՎԵՐԻ ԼԵՂՈՒՆ

1968 թ. Վիեննայում կազմակերպված փիլիսոփայության XIV միջազգային գիտաժողովն ընթանում էր Խորհրդային Միության համար ծանր պայմաններում: Դրան նախորդել էին Չեխոսլովակիայի դեպքերը, երբ խորհրդային զորքերը մտել էին Չեխոսլովակիա:

Խորհրդային պատվիրակության կազմում էր նաև Համբարձումյանը, որի հեղինակության հետ մեծ հույսեր էին կապում պատվիրակության անդամները:

Բանն այն էր, որ կազմակերպիչները տարբեր պատճառաբանություններով ամեն կերպ խոչընդոտում էին խորհրդային պատվիրակության ժամանումը:

Համբարձումյանը մուտքի թույլտվություն ստացավ ուշացումով. նախօրոք պլանավորվածի փոխարեն նա Վիեննա ժամանեց մեկ օր ուշացումով, առանց կնոջ: Ժամանման օրը նրան մոտեցավ մոսկվացի մի կին, ով զբաղվում էր պատվիրակների կենցաղային հարցերով: Նա հայտարարեց՝ քանի որ Համբարձումյանը ուշացումով է ժամանել և առանց կնոջ, ապա նրան հատկացված գումարը պետք է վերահաշվարկվի: Երբ նա, վերցնելով գրիչ, պատրաստվեց հաշվարկներ կատարել, Համբարձումյանը որոշ ձշտումներից հետո անմիջապես նշեց վերադարձվող գումարի չափը:

Զարմացած կինը պնդեց, որ ինքն, այնուամենայնիվ, պետք է ձշտի այդ թիվը: Հաշվարկը բավականին երկար տևեց. ռուբլին պետք էր փոխարկել դոլարի, հետո՝ ավստրիական շիլինգի: Արդյունքում պարզվեց, որ Համբարձումյանը բացարձակ ձիշտ էր հաշվել:

Այդ ժամանակ Համբարձումյանը 60 տարեկան էր: Այդ տարիքում նա կարողանում էր ակնթարթորեն ոչ միայն տարբեր մաթեմատիկական գործողություններ կատարել, այլև փայլուն հաշվարկել գիտության և կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող հիմնախնդիրների տարբեր կողմերը:



(1909-1993)

## **Սամվել Քոչարյանց:** Սամվել

Քոչարյանցը Խորհրդային Միության ամենագաղտնի մարդկանցից մեկն էր: Նրա անունը հայտնի էր միայն ատոմային զենքի ստեղծմամբ զբաղվող շատ քիչ ֆիզիկոսների, հրթիռային տեխնիկայի մասնագետների, պետության բարձրագույն ղեկավարությանը, ԱՄՆ-ի կենտրոնական հետախուզության վարչությանը: Քչերը գիտեին, թե որտեղ է նա ապրում, ինչով է զբաղվում: Նրա անձնագրում նշված էր, որ Մոսկվայի բնակիչ է, սակայն հասցեն կեղծ էր. իրականում այդպիսի փողոց և տուն գոյություն չունեին: Գրեթե կես դար նա ապրում և աշխատում էրխստորեն գաղտնի

պահվող «Արգամաս-16» գիտավանդում (ներկայիս՝ Նիժնի Նովգորոդի մարզի Սարով քաղաք):

Սամվել Քոչարյանցը այն տաղանդավոր գիտնականներից էր, ովքեր Խորհրդային Միությունը դարձրին ատոմային տերություն՝ ջարդելով Միացյալ Նահանգների մենաշնորհն այս ոլորտում: Քոչարյանցի հանձարեղ գաղափարների, տեխնիկական լուծումների և հմուտ ղեկավարության շնորհիվ ստեղծվեց ատոմային զինամթերքների մի ամբողջ համակարգ, որը Խորհրդային Միության միջուկային վահանի հիմքն էր կազմում:

Նա միջուկային և ջերմամիջուկային զենքի գլխավոր կոնստրուկտորն էր, իսկ Խորհրդային Միության փլուզումից հետո՝ Ռուսաստանի միջուկային դաշնային կենտրոնի գլխավոր կոնստրուկտորը:

Քոչարյանցը Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս էր, Լենինյան մրցանակի, Ստալինյան երեք մրցանակի, ԽՍՀՄ Պետական մրցանակի դափնեկիր, Լենինի 6 շքանշանների և Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանի ասպետ, Ռուսաստանի Դաշնության գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

## **ԱՆՑԱԾ ՌՈՂԻՆ**

Սամվել Գրիգորի Քոչարյանցը ծնվել է 1909 թ. Հայաստանի Նոր Բայազետ (ներկայիս Գավառ) քաղաքում: Նա վեցերորդ երեխան էր ընտանիքում:

Սամվելը իր եղբոր՝ Սոսի հետ հաջողությամբ ավարտում է տեղի միջնակարգ դպրոցը: Ընտանիքը մեծ էր, հեշտ չէին ապրում, այդ պատճառով



դպրոցից հետո եղբայրները ստիպված էին աշխատել: Նրանք երկուսն էլ ուժեղ էին մաթեմատիկայից և ընդունվում են Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Սակայն նրանք հայտարարվում են կուլակի ընտանիքի զավակներ, ինչի պատճառով ստիպված են լինում մեկնել Մոսկվա: 1933 թ. նրանք ընդունվում են Մոսկվայի էներգետիկական ինստիտուտ, սակայն Սոսը մեկ տարի հետո ստիպված է լինում վերադառնալ Երևան:

1937 թ. Սամվելն ավարտում է ինստիտուտը, ընդունվում է ասպիրանտուրա և միաժամանակ դասախոսություններ կարդում տեսական էլեկտրատեխնիկայի ամբիոնում: 1941 թ. Քոչարյանցը ստանում է գիտությունների թեկնածուի կոչում:

1945 թ. Քոչարյանցը կատարում է գերմանական միջուկային ծրագրին վերաբերող հատուկ հանձնարարություն: 1947 թ. նա սկսում է աշխատել «Արզամաս-11» գաղտնի կոնստրուկտորական բյուրոյում որպես ավտոմատ համակարգերի կոնստրուկտորական սեկտորի պետ, իսկ հետո՝ բաժնի պետ:

Խորհրդային առաջին ատոմային ռումբի ավտոմատ համակարգերի մշակման համար Քոչարյանցը 1949 թ. արժանանում է Ստալինյան մրցանակի և Լենինի շքանշանի, իսկ 1951 թ. նորից արժանանում է Ստալինյան մրցանակի:

1953 թ. խորհրդային առաջին ջրածնային ռումբի հաջող փորձարկումից հետո խմբի երեք այլ անդամների հետ միասին նա դառնում է առաջին աստիճանի Ստալինյան մրցանակի դափնեկիր և պարգևատրվում է Լենինի երկրորդ շքանշանով:

1958 թ. Քոչարյանցը առանց ատենախոսության պաշտպանության ստանում է տեխնիկական գիտությունների դոկտորի աստիճան:

1961 թ. նրան շնորհվում է Լենինյան մրցանակ: Բալիստիկ հրթիռների մարտական գլխիկների մշակման համար 1962 թ. նրան շնորհվում է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում, իսկ 1969 թ.՝ ՌՍՖՍՌ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործչի կոչում:

1977 թ. նա չորրորդ անգամ արժանանում է Պետական մրցանակի: Ռեակտիվ-արագընթաց մարտական բլոկների մշակման համար նրան 1984 թ. երկրորդ անգամ շնորհվում է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

Քոչարյանցը մահանում է 1993 թվականին:

## **ՔՈՉԱՐՅԱՆՑԻ «ԱՆՀԵՏԱՑՈՒՄԸ»**

1947 թ. սեպտեմբերին Քոչարյանցի կյանքում տեղի է ունենում կտրուկ շրջադարձ: Մոսկվայի էներգետիկայի ինստիտուտում, որտեղ աշխատում էր

Քոչարյանցը, հայտնվում է կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի ռազմական բաժնի վարիչը և հայտնում Քոչարյանցին, որ նա ուղարկվում է նոր աշխատանքի՝ Ստալինի անձնական տրամադրության տակ: Այսպես Քոչարյանցը անհետանում է ինստիտուտից: Ոչ ոք չէր կարող ենթադրել, որ Քոչարյանցին ուղարկել են խիստ գաղտնի մի ավան, որն այն ժամանակ կոչվում էր «Օբյեկտ», իսկ հետո անվանեցին «Արզամաս-16»: Այդտեղ Քոչարյանցն ապրում և աշխատում է 47 տարի՝ դառնալով Խորհրդային Միության ամենագաղտնի մարդկանցից մեկը:

Նա կոնստրուկտորական բաժանմունքի վարիչ էր, փորձարարական ֆիզիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր կոնստրուկտորը, ատոմային և ջրածնային զենքի գլխավոր կոնստրուկտորը, ինչի մասին շատ քչերը գիտեին:

## **ԸՆՏԱՆԻՔԸ**

Քոչարյանցն ուներ երեք տղա, որոնք հետագայում դարձան հիանալի մասնագետներ: Վաղիմը «Մոլնիա» հատուկ կոնստրուկտորական բյուրոյի գլխավոր կոնստրուկտորի տեղակալն էր, Պետական մրցանակի դափնեկիր: Գրիգորին անցավ հոր հետքերով՝ շատ տարիներ աշխատելով Փորձարարական ֆիզիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտում որպես բաժանմունքի ղեկավար, հատուկ տեխնիկայի մշակման համար արժանացավ մի շարք պետական մրցանակների: Փոքր տղան՝ Գենադին, տեխնիկական գիտությունների թեկնածու էր: Իր հուշերում նա գրում է. «Հայրս հաճախ էր ասում, որ իր պարզների, հասարակական դիրքի, գիտական հաջողությունների համար պարտական է իր կնոջը՝ մեր մայրիկին՝ Լյուբով Վասիլենային: Հենց նա էր երկար տարիներ ապահովում մեր տան բարեկեցությունը, հարմարավետությունն ու հանգստությունը»:

## **ՔՈՉԱՐՅԱՆՑԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ**

Քոչարյանցը սիրում էր իր աշակերտներին և աշխատակիցներին խորհուրդներ տալ. «Ցանկացած փաստաթուղթ կարդացե՛ք ուշադրությամբ և մինչև վերջ», «Գիտափորձը, հանձնարարությունը կատարե՛ք այնպես, որ տեսնեք արդյունքը», «Միայն ձի՛շտ խոսեք», «Հետևե՛ք ձեր առողջությանը, քանի որ այն հաջողության գրավականն է», «Օգնե՛ք մեկմեկու ուսման մեջ, աշխատանքում և կյանքում»:

## **Գուրգեն Ասկարյան:** Մոսկվայում ծնված այս տաղանդավոր



(1928-1997)

Ֆիզիկոսը, լինելով ավելի քան 200 գիտական աշխատանքների հեղինակ, մեծ ներդրում ունի բարձր էներգիաների ֆիզիկայի, ակուստիկայի և օպտիկայի բնագավառներում: Ասկարյանի աշխատանքները հիմք են հանդիսացել ֆիզիկայի մի շարք նոր ուղղությունների զարգացման համար:

Իր հանրահայտ լույսի ինքնակիզակետման երևույթի հայտնագործության համար նա արժանացել է Խորհրդային Միության բարձրագույն պարգևի՝ Լենինյան մրցանակի: Մարդկային վեհ արժանիքներով օժտված այս մարդն ապրեց ընդամենը 69 տարի:

## **ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Գուրգեն Ասկարյանը ծնվել է 1928 թ. Մոսկվայում, բժիշկներ Աշոտ և Աստղիկ Ասկարյանների ընտանիքում: Ընտանիքում երկու զավակներն էին՝ ինքը և քույրը՝ Գոհարը: Հայրը մահանում է, երբ Գուրգենը 12 տարեկան էր: Դպրոցն ավարտելով ոսկե մեդալով՝ 18 տարեկանում Գուրգենն ընդունվում է Մոսկվայի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը, որտեղ, մասնագիտանալով միջուկային ֆիզիկայի բնագավառում, սկսում է իր առաջին գիտական աշխատանքները:

24 տարեկանում ավարտելով համալսարանը՝ նա ընդունվում է Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան, որտեղ նրա գիտական ղեկավարն էր ակադեմիկոս Զելդովիչը: Մեկ տարի անց նա տեղափոխվում է Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտ, որտեղ և պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը:

1957 թ. Ասկարյանը հրատարակում է նյութի հետ արագ մասնիկների փոխազդե-



Ասկարյանը հայտնագործել է լույսի ինքնակիզակետման երևույթը:

ցությանը նվիրված հողված, որում առաջարկվում է մասնիկների գրանցման նոր եղանակ: Նա ցույց տվեց, որ, անցնելով միջավայրով մասնիկները կարող են ծնել ձայնային իմպուլսներ: Այդ հետազոտության արդյունքները տիեզերական ճառագայթների ուսումնասիրության ոլորտում նոր մոտեցումների խթան հանդիսացան:

Ասկարյանի հաջորդ հետազոտությունը նոր ուղղություն բերեց տիեզերական ճառագայթների ֆիզիկայում: Նա ցույց տվեց, որ տիեզերական ճառագայթների փնջերն արձակում են նաև էլեկտրամագնիսական ալիքներ՝ քննձեռնելով դրանց գրանցման նոր հնարավորություն: Ներկայումս շատ աստղադիտարաններում տիեզերական ճառագայթների ուսումնասիրությունները հիմնված են մասնիկների գրանցման հենց այս եղանակի վրա:

Լազերների ի հայտ գալու հետ Ասկարյանն անմիջապես սկսում է հետաքրքրվել դրանց խնդիրներով: Շատ արագ նա դառնում է նյութի հետ լազերային ճառագայթման փոխազդեցության ոլորտի համաշխարհային հեղինակություններից մեկը: Նրա կողմից ինքնակիզակետման երևույթի հայտնագործումը մեծ թվով հետազոտությունների խթան է հանդիսանում: Նա ցույց է տալիս, որ հզոր լազերային ճառագայթները, անցնելով նյութի միջով, ծնում են ձայնային ալիքներ: Այս ուսումնասիրությունների արդյունքում ծնվում է ֆիզիկայի նոր բնագավառ՝ ճառագայթային ակուստիկան:

Ասկարյանը ոչ մի նշանակություն չէր տալիս գիտական կոչումներին կամ աստիճաններին: Նրա համար կարևոր էին գիտական արդյունքները: Ահա թե ինչու միայն գործընկերների համառ հորդորներից հետո նա շատ ուշացած ստացավ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճան: Նրան այդ կոչումը շնորհվեց առանց ատենախոսության պաշտպանության, գիտական հողվածների հիման վրա, որոնց թիվն անցնում էր երկու հարյուրից:

Ասկարյանը մահացավ 1997 թ. 69 տարեկան հասակում:

## **ՆՈՐԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ ԿՈՂՔՈՎ ԱՆՑԱՎ**

Համալսարանի երրորդ կուրսում Ասկարյանն առաջարկում է լիցքավորված արագ մասնիկների գրանցման նոր եղանակ: Նրա գաղափարը հետևյալն էր. ենթադրենք ունենք գերտաքացած թափանցիկ հեղուկ: Շատ փոքր քանակությամբ էներգիան բավարար է, որպեսզի այն հասցնի եռման վիճակի: Եթե լիցքավորված արագ մասնիկն անցնի այդպիսի հեղուկի միջով, ապա նա իր էներգիան կծախսի հետագծի մոտ գտնվող ատոմների իոնացման վրա, ինչը կհանգեցնի հետագծին մոտ հեղուկի եռմանը: Դրա հետևանքով հետագիծը կդառնա տեսանելի:

Ասկարյանն այս գաղափարը քննարկում է իր մի քանի համակուրսեցիների և դասախոսների հետ, և նրանցից ոչ մեկը չի ժխտում նման եղանակի իրագործման հնարավորությանը: Այդ տարիներին Ասկարյանը բավարար փորձառու չէր և չի հրատարակում իր գաղափարը: Եվ ահա մի քանի տարի անց՝ 1952 թ., այս գաղափարը կիրառվում է ամերիկացի ֆիզիկոս Գլեզերի կողմից, ով ստեղծում է այս մեթոդով աշխատող ներկայումս հանրահայտ պղպջակային խցիկը: Այդ սարքն այնքան օգտակար էր բարձր էներգիաների ֆիզիկայում, որ Գլեզերը 1960 թ. արժանանում է Նոբելյան մրցանակի:



Գ. Ա. Ասկարյանը, Ա. Մ. Պրոխորովը, Գ. Պ. Շիպուլոն

Այս իրադարձությունը մեծ ազդեցություն է ունենում Ասկարյանի վրա. մի կողմից նա ցնցված էր, որ Նոբելյան մրցանակն իրենից այդքան փոքր հեռավորությամբ անցավ, մյուս կողմից դա իրեն մեծ ինքնավստահություն է հաղորդում:

## ԼՈՒՅՍԻ ԻՆՔՆԱԿԻՉԱԿԵՏՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄԸ

Ասկարյանի թերևս ամենից փայլուն հայտնագործություններից մեկը լույսի ինքնակիզակետումն է: Նա ցույց տվեց, որ երբ լույսի հզոր ձառագայթն անցնում է միջավայրով, նրա բեկման ցուցիչը ձառագայթի ներսում դառնում է ավելի մեծ, քան նրանից դուրս: Արդյունքում առաջանում է որոշակի ալիքատար, ինչը սահմանափակում է ձառագայթի տարամիտումը: Նա այդ երևույթն անվանեց ինքնակիզակետում: Այդ երևույթի մասին Ասկարյանի հոդվածը երկու տարի գրեթե չի արժանանում ֆիզիկոսների ուշադրությանը: Իրավիճակը կտրուկ փոխվում է 1964 թ., երբ տպագրվում է Նոբելյան մրցանակակիր Տաունսի հոդվածը, որում նույնպես քննարկվում է այդ երևույթը: Ինքնակիզակետման երևույթով սկսում է զբաղվել նաև ակադեմիկոս Պրոխորովը: Ասկար-

յանն իր հայտնագործությունն ամրագրելու համար հայտ է ներկայացնում գյուտերի և հայտնագործությունների կոմիտե:

Պրոֆսորովը համապատասխան նամակով դիմում է Գյուտերի և հայտնագործությունների կոմիտեին, որտեղ հարցականի տակ է դնում Ասկարյանի առաջնահերթությունը: Չնայած այդ ամենին՝ 1971 թ. Ասկարյանը ստանում է լույսի ինքնակիզակետման երևույթի հայտնագործումը հաստատող դիպլոմ, իսկ 1988 թ. նա ինքնակիզակետման երևույթի հայտնագործման համար արժանանում է Լենինյան մրցանակի:

## **«ՄՈՍԿՈՎՅԱՆ ՏԱՐԱԼՑՄԱՄԲ» ՀԱՅԸ**

Ասկարյանն իր ամբողջ կյանքն անցկացրեց Մոսկվայում: Նա իր մասին ասում էր. «Ես հայ եմ՝ մոսկովյան տարալցմամբ»: Ասկարյանն այդպես էլ չեղավ Հայաստանում՝ չնայած հայ ֆիզիկոսների բազմաթիվ հրավերներին:

Պատանեկան տարիներին նա սովորում էր երաժշտական ուսումնարանի ջութակի դասարանում և ցուցաբերում էր արտասովոր ունակություններ: Սակայն, ունենալով ինքնագնահատման բարձր չափանիշներ, նա դադարում է հաճախել ուսումնարան՝ գտնելով, որ չի կարող հասնել բարձր մակարդակի:

Ասկարյանն այդպես էլ չամուսնացավ՝ իր ամբողջ ազատ ժամանակը նվիրելով հիվանդ քրոջ խնամքին:

Ասկարյանը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում գեղանկարչության նկատմամբ: Նա անձամբ ծանոթ էր շատ հայտնի նկարիչների հետ, ուներ նկարների մեծ հավաքածու: Մահից հետո հայտնաբերվեց Ասկարյանի կտակը, որով նա իր նկարների հավաքածուն տրամադրում էր Մոսկվայի Պուշկինի անվան կիրառական արվեստների թանգարանին:

## **ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ**

1992 թ. գիտությունների դոկտորի գիտական աստիճան ստանալուց կարճ ժամանակ անց նրա մոտ ծագում են առողջական խնդիրներ, որոնք ուղեկցվում են նաև քրոջ՝ Գոհար Ասկարյանի առողջության վատթարացմամբ: Նրանք երկուսն էլ մահացան նույն օրը՝ 1997 թ. մարտի 2-ին, իրենց մոսկովյան բնակարանում սրտային հիվանդության պատճառով:

1997 թ. փետրվարին Ասկարյանը աշխատակիցներին զգուշացնում է, որ մեկ շաբաթ չի լինելու ինստիտուտում. պետք է բուժվի և աշխատի տանը: Նա կտրականապես պատվիրում է, որ այդ ընթացքում իրեն չանհանգստացնեն: Մեկ շաբաթն անցնելուց հետո չի վերադառնում: Աշխատակիցներն ու ընկեր-

ները, բացակայությունից անհանգստացած, մի քանի անգամ գնում են նրա տուն, թակում են դուռը, զանգահարում, սակայն ոչ ոք չի արձագանքում:

Վերջապես բացելով դուռը՝ տանտիրոջը հայտնաբերում են խոհանոցում՝ գրքերի կույտի վրա նստած, մահացած վիճակում: Նա մինչև վերջին վայրկյանը աշխատել էր:

Սենյակում անկողնում պառկած էր նրա մահացած քույրը՝ Գոհարը: Բժշկական փորձաքննության արդյունքում պարզվում է, որ քույրը և եղբայրը մահացել էին նույն օրը՝ երկուսն էլ սրտի իշեմիկ հիվանդությունից:


## **ԱՍԿԱՐՅԱՆԻ ԿԱՏԱԿՆԵՐԻՑ**

Ասկարյանը հնարամիտ կատակներ կազմակերպելու մեծ վարպետ էր: Նրա գործընկեր Ռաբինովիչը միշտ աշխատանքի էր ներկայանում մեծ և ծանր պայուսակով: Ասկարյանը ընկերներին ասում է, որ Ռաբինովիչը երբեք չի բացում պայուսակը, և գրազ կգա, որ եթե նրա պայուսակում մի աղյուս դնեն, ապա նա մի ամբողջ ամիս դա չի նկատի: Իրոք, Ռաբինովիչը ձիշտ մեկ ամիս շրջում էր աղյուս կրող պայուսակով, մինչև Ասկարյանը ներկաների աչքի առաջ նրանից հանեց աղյուսը:

Ահա մեկ ուրիշ պատմություն: Լաբորատորիայում որոշել էին նշել ինստիտուտի աշխատակից Լեմանի 50-ամյակը: Քանի դեռ աշխատակիցները սեղանի շուրջն էին, Ասկարյանը հանում է աթոռին ամրացված գույքագրման համարը, ամրացնում Լեմանին նվիրած լուսանկարչական ապարատին և զանգահարում պահակակետ.

- Երբ Լեմանը դուրս կգա, ստուգե՛ք նրան, նա պետական գույք է դուրս բերում: Ասկարյանը թելադրում է նաև գույքագրման համարը:

Լեմանը ստիպված էր մի քանի տիպի րոպեներ ապրել, մինչև որ պարզվեց ողջ եղելությունը:



**Ղևոնդ Ալիշան (1820-1901):** Քերովբե Պետրոս-Մարգարի Ալիշանը 12 տարեկան էր, որ նավը Կոստանդնուպոլսից նրան տարավ Ադրիատիկ ծովի ափին գտնվող գեղատեսիլ Վենետիկ քաղաքը: Վենետիկը կառուցված է 118 կղզիների վրա, որոնք իրար են միանում 400 կամրջով և 150 ջրանցքով: Կղզիներից մեկը կոչվում է Սուրբ Ղազար: Այդ կղզում դեռևս 1701թ. հիմնադրվել է հայագիտական խոշոր կենտրոն Մխիթարյան միաբանությունը, որի վարժարանում սովորելու էր եկել Ղևոնդ Ալիշանը:

Վարժարանում պատանին այքի ընկավ արտակարգ աշխատասիրությամբ: Ուսումնառության սկզբից նեթ նա սիրեց աշխարհագրությունը, պատմությունն ու գրականությունը: 16 տարեկան էր, որ կոչեցին Ղևոնդ Ալիշան: 1832 թվականից մինչև իր կյանքի վերջը Ալիշանը Սուրբ Ղազար կղզուց բացակայեց միայն պաշտոնի բերումով կամ ստիպված: Նա տիրապետում էր տասը լեզվի: Իր խուցը միակ տեղն էր, ուր կարելի էր գտնել նրան՝ խորասուզված բազմազեղու գրքերի ու ձեռագրերի աշխարհում: Իսկ եթե օրվա մեջ կարճ ժամանակով դադարեցնում էր աշխատանքը, ապա գնում էր հանգստանալու իր իսկ ձեռքով սարքած լճակի ափին, ձիթենիների սովերում: Այդ լճակը շատ նման էր նրա հայրենի Վանա լճին: Մայր Հայաստանի կարոտը Ալիշանը այստեղ էր առնում:

Ութսուն տարի ապրեց այդ գիտնական հսկան, բայց երբեք չտեսավ Հայաստանը: Մինչդեռ շատ լավ գիտեր Հայաստանի պատմությունն ու աշխարհագրությունը, նրա սարերն ու ձորերը, գետերն ու լճերը, ճանապարհներն ու բերդերը, ճարտարապետական հուշարձանները:

Վենետիկում իրար հետևից լույս էին տեսնում Ալիշանի գրքերը: Նա առաջիններից էր, որ գրեց աշխարհաբար բանաստեղծություններ: Ալիշանը հավաքեց և տպագրեց հայկական ժողովրդական բանահյուսությունից «Հայոց երգք ոսմկականք» ժողովածուն, իսկ «Հայբուսակ կամ հայկական բուսաբանություն» գրքում նկարագրեց Հայաստանում աճող շուրջ 3400 բույս ու ծաղկատեսակ: Ալիշանի խուցը դարձել էր յուրօրինակ ուխտատեղի այն հայերի համար, որոնց հուզում էին հայոց պատմությունն ու ճակատագիրը: Աշխարհի տարբեր ծայրերից այստեղ էին գալիս հանրաճանաչ գիտնականներ, որպեսզի խորհուրդ հարցնեին պատմաբան ու աշխարհագրագետ, բանասեր, բանաստեղծ ու թարգմանիչ Ղևոնդ Ալիշանից:

Ղևոնդ Ալիշանը Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1838-ից: Եղել է Ֆրանսիական ակադեմիայի Պատվո լեգեոնի դափնեկիր, Ենայի փիլիսոփայական ակադեմիայի պատվավոր անդամ և դոկտոր:

Ղևոնդ Ալիշանը մահացել է Ս.Ղազար կղզում:





**Լևոն Աբգարի Օրբելի (1882-1958):** Հայ ֆիզիոլոգ, էվոյուցիոն ֆիզիոլոգիայի ուսանսքի հիմնադիր, ԽՍՀՄ ԳԱ, ՀՍՍՀ ԳԱ, ԽՍՀՄ ԲԳԱ ակադեմիկոս Լ.Ա. Օրբելին ծնվել է Դարաչիչալում (Ծաղկաձոր, Հայաստանի Հանրապետություն): Լ.Օրբելին Հովսեփ Օրբելու և Ռուբեն Օրբելու եղբայրն է: Գիտական հետազոտությունները վերաբերում են վեգետատիվ նյարդային համակարգի ուսումնասիրություններին:

1907-1920թթ.՝ եղել է Ի.Պ.Պավլովի օգնականը,

1920-1931թթ.՝ Լենինգրադի բժշկական ինստիտուտի պրոֆեսոր,

1943-1950թթ.՝ ռազմաբժշկական ակադեմիայի պետ,

1936-1950թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ Ի.Պ.Պավլովի անվան ֆիզիոլոգիական ինստիտուտի տնօրեն,

1939-1946թթ.՝ ԿԳԲ ակադեմիկոս քարտուղար,

1942-1946թթ.՝ ՍՍՀՄ ԳԱ փոխպրեզիդենտ,

1956-1958թթ.՝ Ի.Մ. Մեչենովի անվան էվոյուցիոն ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն:

Լ.Ա.Օրբելին բժշկական ծառայության գեներալ-գնդապետ է: Նա ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր է, Սոցիալիստական աշխատանքի հերոս: Պարգևատրվել է Լենինի (5), «Աշխատանքային կարմիր դրոշ» (3), «Կարմիր աստղ» շքանշաններով: Ի.Ի. Մեչինիկովի անվան ոսկի մեդալով, Ստալինյան և Պավլովի անվան մրցանակների դափնեկիր:

Մահացել է 1958թ. Լենինգրադում:



**Միքայել Չայլալյան (1902-1991):** Ծնվել է քաղաք Նոր Նախիջևանում: Հայ սովետական ֆիտոֆիոլոգ: ՄՍՀՄ ԳԱ (1968), ՀՍՍՀ ԳԱ (1967) ակադեմիկոս, ՀՍՍՀ գիտ. վաստակավոր գործիչ (1967): Ավարտել է Երևանի համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը (1926թ): Աշխատել է ՄՍՀՄ ԳԱ Տիմիրյազևի անվան բույսերի ֆիզիոլոգիայի ինստիտուտում 1935-ից բույսերի աճման ու զարգացման լաբորատորիայի վարիչ էր: 1941-1948 թթ. եղել է Երևանի բույսերի անատոմիայի և ֆիզիոլոգիայի (1943-ից պրոֆեսոր), միաժամանակ Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի բույսերի ֆիզիոլոգիայի և մանրէաբանության ամբիոնների վարիչ (1941-1946): 1941-ից աշխատել է ՀՍՍՀ ԳԱ բուսաբանության ինստիտուտում, որտեղ 1942-ին հիմնել է բույսերի ֆիզիոլոգիայի լաբորատորիան:

1941-ից աշխատել է ՀՍՍՀ ԳԱ բուսաբանության ինստիտուտում, որտեղ 1942-ին հիմնել է բույսերի ֆիզիոլոգիայի լաբորատորիան:

Չայլալյանի գիտական աշխատանքները հիմնականում վերաբերում են բույսերի աճման ու զարգացման հարցերի օստոգենեզի ընդհանուր օրինաչափությունների մշակմանը, գեներատիվ զարգացման և հորմոնային գործոնների բացահայտմանը:

Չայլալյանը բույսերի աճի, զարգացման ու ծաղկման հորմոնային տեսության հիմնադիրն է: Այդ տեսությունը համաշխարհային ճանաչում է բերել նրան: Դեռևս 1936-1937 թթ. Չայլալյանը հանգել է այն եզրակացության, որ բույսերի ծաղկման լուսապարբերական կարգավորումն իրականանում է հորմոնային գործոնների օգնությամբ, որոնց անվանել է ֆլորիգեն: Չայլալյանը աշխատակիցների հետ ցույց է տվել, որ ֆլորիգենը հորմոնային կոմպլեքս է, կազմված 2 բաղադրամասերից, գիբերելիններից և անտեզլիններից: Գիբերելինների անբավարարությունը սահմանափակում է երկարօրյա բույսերի զարգացումը կարճ օրվա պայմաններում, իսկ անտեզլինների պակասը՝ կարճօրյա բույսերի զարգացումը:

Չայլալյանը պարզել է, որ բացի հորմոնային խթանիչներից բույսերի ծաղկման կարգավորմանը մասնակցում են նաև արգելակող բնույթի նյութերը: Միաժամանակ հաստատել է, որ բույսերի օպտիմալ լուսապարբերականության ժամանակ փոփոխվում են սպիտակուցների սինթեզը, շնչառության և ֆոտոսինթեզի պկտիվությունը: Բույսերի ծաղկման սնուցման և հորմոնալ գործոնների ուսումնասիրության արդյունքների հիման վրա Չայլալյանը ձևակերպեց ընդհանուր կոնցեպցիա, համաձայն որի բոլոր միամյա բույսերի ծաղկումը ընթանում է 2

փուլով, նախ առաջանում են ծաղկային ցողունները, ապա՝ ծաղիկները: Չայլախյանի աշխատանքները կարևոր գիտական և գործնական նշանակություն ունեն գյուղատնտեսության համար: Չայլախյանը գերմանական բնախույզների «Լեոպոլդինա» ակադեմիայի ակադեմիկոս է, բույսերի ֆիզիոլոգների, բուսաբանների (1969) ամերիկյան և այլ երկրների գիտական ընկերությունների պատվավոր անդամ, ԳԴՀ Ռոստոկյան համալսարանի պատվավոր դոկտոր (1969թ.): Պարգևատրվել է Լենինի, «Աշխատանքային կարմիր դրոշ» և «Կարմիր աստղ» շքանշաններով:


Չայլախյանի կարևոր աշխատություններից են.

«Բույսերի զարգացման հորմոնալ տեսությունը»,

«Բույսերի սեռը և նրանց հորմոնալ կարգավորումը»,

«Բույսերի ծաղկման կարգավորումը» և այլն:

Չայլախյանը մահացել է Մոսկվայում:



**Նորայր Մարտիրոսի Միսակյան (1907-1966):** ՄՍՀՄ ԳԱ, ՀՄՍՀ ԳԱ ակադեմիկոս, հայ սովետական կենսաքիմիկոս Ն. Միսակյանը

ծնվել է 1907թ. հունվարի 12-ին Աշտարակում, խաղողագործի ընտանիքում: Դպրոցն ավարտուց հետո ընդունվել է Երևանի համալսարանը, իսկ մեկ տարի անց՝ 1929թ. գործուղվել է Մոսկվա՝ սովորելու Կ.Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիայում: Ակադեմիան ավարտելուց հետո նա աշխատանքի է անցել ՄՍՀՄ գիտությունների ակադեմիայի կենսաքիմիայի ինստիտուտում:

միայի ինստիտուտում:

Միսակյանը աշակերտել է Ա.Բախին և Ա.Օպարինին: 1949-1959 թթ. եղել է ՄՍՀՄ ԳԱ նախագահության գլխավոր գիտնական քարտուղարի տեղակալ:

Ն.Միսակյանի շուրջ 500 գիտական աշխատությունները համաշխարհային ճանաչում բերեցին նրան: Տարբեր երկրների հետ գիտական համագործակցության գործում ունեցած իր ավանդի համար 1964-1966 թթ. նա ընտրվել է Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի հարցերով զբաղվող կազմակերպության՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 13-րդ նստաշրջանի պրիզիդենտ:


Պարգևատրվել է մի շարք շքանշաններով ՄՍՀՄ և արտասահմանյան մեդալներով՝ «Աշխատանքային կարմիր դրոշ» 3 շքանշան, Բախի և Մեչնիկովի մրցանակ:

Նա հետազոտել է ռադիոակտիվ ճառագայթների ազդեցությունը բույսերի նյութափոխանակության վրա:

Ուսումնասիրել է բույսերի պլաստիդների քիմիական կառուցվածքը և բաղադրությունը: Մեծ են Միսակյանի ծառայությունները տիեզերական կենսաբանության բնագավառում:

Ն.Միսակյանը իր ողջ կյանքը նվիրել է գիտությանը: Նրա անունով են կոչվում լուսնի խառնարաններից մեկը, դպրոց և փողոցներ Աշտարակում և Երևանում: Կիսանդրին կանգնեցված է Աշտարակում: Նրա անունը փորագրված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի շենքի վրա:

Ի պատիվ Միսակյանի՝ հուշատախտակ է փակցված Մոսկվայում, ՄՍՀՄ գիտությունների ակադեմիայի կենսաքիմիայի ինստիտուտի շենքի պատին: Վախճանվել է 1966թ. մարտի 12-ին Մոսկվայում:



**Արմեն Լևոնի Թախտաջյան (1910-2009):**

Հայ բուսաբան, ԽՍՀՄ ԳԱ, ՌԴ ԳԱ, ԱՄՆ ԳԱ  
ակադեմիկոս, Լոնդոնի Լինեյան ընկերության,  
Գերմանիայի Լեոպոլդինի անվան բնագետների,  
Լեհաստանի և Նորվեգիայի ակադեմիաների  
իսկական անդամ, ԽՍՀՄ պետական մրցանակի  
դափնեկիր, գիտության վաստակավոր գործիչ  
Ա.Լ. Թախտաջյանը ծնվել է Շուշիում (Լեռնային  
Ղարաբաղ):

Գիտական աշխատանքները վերաբերում են  
բարձրակարգ բույսերի էվոլյուցիոն մորֆոլոգի-  
ային և կարգաբանությանը, բույսերի աշխար-  
հագրությանը: Թախտաջյանը ստեղծել է բույսերի մոլֆոլոգիայի և  
կարգաբանների դպրոց:

Թախտաջյանը պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշ»,  
Ժողովուրդների բարեկամության շքանշաններով, «Անձնվեր աշխա-  
տանքի համար» 2 և ՀՀԳԱԱ «ոսկե» մեդալներով: Սոցիալիստական  
աշխատանքի հերոս է Վ.Կոմարովի և Ռ.Ալերտոնի անվան մրցանակնե-  
րի դափնեկիր:

Թախտաջյանի առավել կարևոր աշխատանքներից են.

«Ծածկասերմերի մորֆոլոգիական էվոլյուցիան»,

«Ծաղկավոր բույսերի ծագումը և տարածվածությունը»,

«Երևանի ֆլորան»,

«Հայաստանի ֆլորան»:

Թախտաջյանը մահացել է Սանկտ-Պետերբուրգում 2009 թ., 99 տա-  
րեկանում:



### **Բենիամին Եղիշեի Մարգարյան (1913-**

**1985):** Ծնվել է 29.11.1913 թթ. Շուլավերում (այժմ Շահումյանի շրջան). հայ սովետական աստղագետ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս (1971): ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1961): ՄՍՀՄ ԳԱ աստղագիտական խորհրդի անդամ (1964), Սիջազգային աստղագիտական միության «Գալակտիկաներ» հանձնաժողովի նախագահ (1976-1979): 1950-ից ՄՍԿԿ անդամ: Ավարտել է Երևանի համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետը (1938): Աշխատել է Բյուրականի աստղադիտարանում որպես ավագ գիտաշխատող (1943-1951), գալակտիկաների ուսումնասիրության

բաժնի վարիչ (1957-ից): 1943-1950 թթ. աստղագիտություն է դասավանդել Երևանի համալսարանում:

Գիտական աշխատությունները վերաբերում են աստղային ու արտագալակտիկ աստղագիտության պրոբլեմներին: Մասնակցել է աստղերի բաշխման մեջ դիտվող ֆլուկտուացիաների տեսության մշակմանը՝ հաշվի առնելով միջաստղային կլանումը: Դիտողական տվյալների հիման վրա հաստատել է, որ աստղասփյուռները լայնանում են: Մշակել է հատուկ մեթոդ, որի հիման վրա 1965-ից Բյուրականի աստղադիտարանում սկսել է երկնքի սպեկտրալ շրջահայացությունը: Հայտնաբերել է հատուկ դասի օբյեկտներ, որոնք կոչվում են իր անունով՝ Մարգարյանի գալակտիկաներ: Բ. Մարգարյանը սպեկտրի ուլտրամանուշակագույն տիրույթում ճառագայթման ավելցուկ ունեցող գալակտիկաները հայտնաբերել է Բյուրականի աստղադիտարանի 1 մետր տրամագիծ ունեցող՝ Շմիդտի աստղադիտակով ստացված սպեկտրների միջոցով: Մարգարյանի գալակտիկաների մեծ սպեկտրներում դիտվում են բարձր գրգռման գծեր: Գալակտիկաների հայտնագործման շնորհիվ Ստեյփերտի տիպի մինչ այդ հայտնի գալակտիկաների թիվը մեկ-երկու տասնյակից հասավ 120-ի: Այս ամենը վկայում է, որ Մարգարյանի գալակտիկաների կորիզներում ընթանում են բուռն, ակտիվ պրոցեսներ: Հավանաբար, ճառագայթման և կառուցվածքային սպեկուլյատություններն առաջանում են միևնույն ակտիվ պրոցեսների, օրինակ՝ պայթյունների հետևանքով: Մարգարյանի գալակտիկաների հայտնագործումը հաստատեց Վիկտոր Համբարձումյանի ղեկավարությամբ մշակված գալակտիկաների կորիզների ակտիվության ուղղությունը: Մարգարյանը նաև ՄՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր է: